

ՀՐԱՏ. Պ. Հ. ՈՒՍՈՒՑՉ. ՄԻՈՒԹԵԱՆ, ԹԻՒ 2

2667

263.

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՄՇԱԿՈՒԾ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԻ ՄԵԶ Ի ՎԱՐՆԱ



ՏՊԱՐԱՆ Յ. ԱԽԵՏԱՐԱՆԵԱՆ

ՅՈՒՄԼԱ, ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

1906

14193

2667

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՊՈՒԼԿԱՄՐԻՈՅ ՀՅ. ՍԻՍՈՒՅՉՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա

Ն Պ. Ա. Տ. Ա. Կ

Յօդուած 1. — Պուլկարիոյ Հայ Ռւսուցչական Միութեան
նսպատակն է՝ Ա.) Պահել ռւսուցչին անկախութիւնը իբր հա-
սարակական գործիչ՝ տեղական օրէնքներու հիման վրայ,
ապահովել անոր նիւթական վիճակը ներկային եւ ապաղային
մէջ։ Բ.) Զգտիլ կրթական գործին կանոնաւոր զարգացման։


Բ

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՉԱԽՆԵՐԸ

Յօդ. 2. — Վերի նսպատակն իրագործելու համար՝ Միու-
թիւնը կը գործածէ յիտագայ միջոցները։

1. Անկանոն կերպով՝ հրաժարեցուցուած ռւսուցիչ-ան-
դամները պաշտպանել եւ անոնց նիւթապէս օգնել հետե-
ւեալ կերպով։ Ա.) Բացարել ռւսուցչին իրաւունքները եւ
պարտականութիւնները Միութեան օրկանին եւ թէ տեղա-
կան մամուլին միջոցաւ։ Բ.) Կոչ ընել հանրային կարծիքին,
բողոք բարձրացնել ազգային իշխանութեան գէմ, եւ Գոր-
ծադիր Մարմնոյն կողմանէ արուած որոշ պայմանադամէ մը
ետք՝ դիմել տեղական իշխանութեանց։ Գ.) Կազմել Միու-
թեան գանձը։

2. Սատարել Ռւսուցչին մտաւորական եւ մանկավար-
ժական կատարելագործման եւ բարձրացման, հրատարակե-
լով, Ա.) Գիտական եւ մանկավարժական զիբուր։ Բ.) Հիմ-
նելով մանկավարժական թերթ մը։ Գ.) Հիմնելով շարժուն



Պրադաբան մը . Դ.) Շըջանական + ճնշերաներ ընել . Ե.) Ա-
մէն մէկ տեղի ուսուցչական մարմին պարտականութիւն
ստանձնելով սարքել ուսուցչ ժողովներ՝ ուր պէտք է ծեծ-
ուին մանկավարժական հարցեր :

Գ

Կ Ա Զ Մ

Յօդ. 3. — Միութիւնը կը բաղկանայ բոլոր ուսուցչ
մարմիններէն եւ այն ուսուցիչներէն՝ որոնք կ'ընդունին ա-
նոր նպատակը եւ վերի ցուցուած մըջոցներով անոր իրա-
կանացման կը ձգտին :

Մանաւութիւն . — Կ'ընդունուին նաև օժանդակ անդամներ :

Յօդ. 4. — Միութիւնը կը կառավարուի գործադիր
մարմինէ մը , որ կ'ընտրուի Պատգամաւորական ժողովէն :

Գ

ՈՒՍՈՒԺՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒԽ ԻՐԱԿՈՒԽՆԵՐԸ

Յօդ. 5. — Ուսուցչ մարմինները յարաբերութեան մէջ
կը մտնեն ուղղակի Գործադիր Մարմնոյն հետ :

Յօդ. 6. — Ուսուցչ մարմինները անկախ են իրենց
կազմին եւ գործերուն մէջ :

Յօդ. 7. — Եթէ ուսուցչական մարմին մը՝ ընդհանուր
գոյն ունեցող միջոց մը առաջարկել փափաքի , պէտք է
կանխաւ զայն իմացնէ Գործադիր Մարմնոյն՝ որ կը զրկէ
հարցը քննադատութեան համար՝ բոլոր ուսուցչ մարմիննե-
րուն եւ ընդհանուր լուծումը կ'իմացնէ օրկանի միջոցաւ :

Յօդ. 8. — Անկանոն կերպով հրաժարեցուցուած ուսուցիչ-
ներու համար՝ Ուսուցչ մարմինները իրենց գաղափարը եւ
կարծիքը կը յայտնեն Գործադիր Մարմնոյն որ անմիջական
քննութիւն կը բանայ եւ պէտք եղածը կը տնօրինէ :

Յօդ. 9. — Բոլոր Ուսուցչ Մարմինները հակակուի
կ'ենթարկին Գործադիր Մարմնոյն գործառնութիւնները ընդ-
հանուր Պատգամ . ժողովն մէջ :

Ե

ՈՒՍՈՒԽՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒԽ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յօդ. 10. — Ուսուցչ մարմինները Գործ Մարմնոյն
կարգադրութիւններուն կը հպատակին :

Յօդ. 11. — Ուսուցչ մարմինները կը ներկայացնեն
Գործ Մարմնոյն մանրամասն տեղեկութիւններ իրենց գոր-
ծունէութեան եւ վիճակին վրայ՝ տարին մէկ անդամ մին-
չեւ Ցուլիս 1 : Ասկէ զատ պէտք է որ յարաբերութեան մէջ
ըլլան ընթացիկ գործերու համար Գործ Մարմնոյն հետ :

Մանէն . — Ուսուցչ մարմինները պարտաւոր են տարին
առ նուազն մէկ անդամ սարքել ներկայացում եւ այլն ի
նպաստ գանձին . Բացառութիւններ կ'ընդունուին՝ երբ բա-
նաւոր պատճառներու ցոյց արուին :

Յօդ. 12. — Ուսուցչ մարմինները կը զրկեն ամեն տա-
րի , ամենէն ուշ մինչեւ Օգոստ 10 , իրենց կազմին մէջ ե-
ղած փոփոխութիւններուն վրայ տեղեկութիւններ , այսինքն
պաշտօն ձգողներու , տեղափոխուուղղներու եւ նոր արձա-
նագրուիլ ուղղողներու անունները :

Յօդ. 13. — Ամէն մէկ ուսուցչ մարմին պարտի Միու-
թեան գանձին յանձնել ներկայ կանոնագրին համաձայն ի-
րեն ինկած վճարումը :

Մանէն . — Վճարումը պէտք է ըլլայ Յ ամիսը անդամ մը :

Զ

Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

Ա. Ի բ ա ռ ա ն գ ն է ր

Յօդ. 14. — Միութիւնը ունի գործօն եւ օժանդակ անդամներ։
Մանէն . 1. — Գործօն անդամ կը կոչուին Միութեան մէջ
գտնուող եւ պաշտօն վրայ ուսուցիչները , իսկ օժանդակ
անդամ կը նկատուին Միութեան նիւթապէս եւ բարյապէս
սատարող հայ անհատները :

Մանէն . 2. — Անկանոն կերպով հրաժարեցուցուած ուսուց-
իչ-անդամները իրենց անդամ ժողով ժողովն անդամ :
Ուսուցչութիւննը ձգող եւ ուրիշ գործի մանող ան-
դամները կը դադրին դորժօն անդամ ըլլալէ . բացառութիւն
կ'ըլլայ Համաժողովին որոշմամբ :

Յօդ. 15. — Անդամ արձանագրուելու համար, պէտք է դրաւոր կերպով գիմել Գործադիր Մարմնոյն, աեղւոյն Ուսուցչ Մարմնոյն միջնոցաւ :

Յօդ. 16. — Գործօն անդամները կը պաշտպանուին Միութեան կողմէ :

Յօդ. 17. — Գործօն անդամները իրաւունք ունին օգտուելու Միութեան դանձէն : Ա.) Եթէ անկանոն կերպով հրաժարեցուցուած են . Բ) Անհատական հիւանդութեան ժամանակ (փոխառութեամբ) :

Բ. Պարտականութեաներ

Յօդ. 18. — Ամէն մէկ անդամ պարտաւոր է յարդել կանոնագրի արամագրութիւնները, Պատգամաւորական ժողովի և Միութեան որոշումները :

Յօդ. 19. Ամէն մէկ անդամ, գործօն թէ օժանդակ, բարոյագէս պարտաւոր է պրօտոկանոր ընել անդամները շատցընելու համար, նոյնպէս ստանալ եւ տարածել Միութեան հրաժարակութիւնները :

Յօդ. 20. — Գործօն անդամները ամսավճար կու ամս իրենց ամսաթոշակին $\frac{1}{2}$ 2-ը (երկու) :

Ծանօթ. 1. — Օժանդակներու ամսավճարը կամաւոր է, մինիմում ($\frac{1}{2}$) սանթիմ :

Ծանօթ. 2. — Յօդ. 14-ի, Ծանօթ. 2-ի մէջ յիշուած անդամները ամսավճարէ զիրծ կը մնան :

Յօդ. 21. — Իր պարտականութիւնները կատարել մերժող եւ ուսուցչութեան հեղինակութիւնը վարդկարելող անդամը առ ժամապէս կը հետացուի Միութեանէն՝ Գործ. Մարմնոյն որոշմամբ եւ Ուսուցչ մարմիններու հաւանութեամբ :

Ծանօթ. — Միութեանէն իսպաս հեռացումը կը թողուի Պատգամաւորական ժողովին :

Ե
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Յօդ. 22. — Գործադիր Մարմինը կը վարէ Միութեան ընդհանուր գործերը: Գործադիր Մարմնոյ պաշտօնավարու-

թիւնը կը տեսէ մէկ ապրի: Նախորդները վերբնարելի են : Ծանօթ. 1. — Գործադիր Մարմնոյն անդամներուն թիւը կ'որոշուի Պատգամ. ժողովին, անդամներուն թիւն է հինգ: Ծանօթ. 2. — Հարկ եղած պարագային տարրոյն մէջ Գործ. Մարմնոյն առաջարկութեամբ եւ Ուսուցչ Մարմիններու հաւանութեամբ անոնց թիւը կ'աւելնայ:

Ծանօթ. 3. — Գործադիր Մարմնոյն անդամներուն մեծամասնութիւնը միեւնոյն քաղաքին մէջ պարտի ըլլալ, իսկ փոքրամասնութիւնը՝ ատրիեր քաղաքներու մէջ:

Յօդ. 23. — Ատենապեաը, Քարառողարը, Գանձապեաը եւ Խմբագիրը կ'որոշուին Պատգամ. ժողովին:

Յօդ. 24. — Ատենապեաը կը ներկայացնէ Միութիւնը՝ Գործադիր Մարմնոյ որոշմամբ եւ հրահանդով:

Յօդ. 25. — Խմբագրական մարմինը, որքան որ Ուսուցչ Միութեան գրական աշխատութիւնները պիտի վարէ միահաղոյն կերպով, պարտի գարձեալ ունենալ իր անուանեալ-պատասխանատու խմբագիրը:

Յօդ. 26. Խմբագրական մարմինը կը հակակառէ Միութեան բոլոր հրատարակութիւնները:

Յօդ. 27. — Խմբագրական մարմինը կը բաղկանայ վեց անդամներէ, որոնց մեծամասնութիւնը կը գանուի մէկ քաղաքի մէջ :

Յօդ. 28. — Գործ. Մարմինը Միութեան գործերը կը վարէ, անոր կամունաւոր յառաջխաղաղ բան հայ կը տանիի, կը կառավարէ Միութեան գանձը, եւ Ուսուցչական մարմիններու համաձայնութեամբ կ'որոշէ հարցերը, որոնցմով պէտք է զրադի Պատգամաւորական ժողովը:

Յօդ. 29. — Գործ. Մարմինը պարտական է ներկայ կառանապերը եւ Պատգ. ժողովին որոշումները կէտ ոտ կէտ գործադիրել :

Ծանօթ. — Կառանապերին եւ Պատգ. ժողովին որոշումներէն զատ՝ ուրիշ գործի մը ձեռնարկած պարագային՝ պարտական է առնել Ուսուցչ Մարմիններուն հաւանութիւնը:

Յօդ. 30. — Գործ. Մարմինը պիտանէէն գուրս ծախքեր

չի կրնար ընել : Բացառութիւններ կ'ըլլան Ուսուցչ . Մարմիններու հաւանութեամբ :

Յանք. — Պիւտձէն կ'որոշէ Պատգ . Ժողովը :

Յօդ. 31. — Գործ . Մարմինը իր գործունէութեան մանրաման տեղեկագիրը կը ներկայացնէ միայն Պատգմ . Ժողովին (կանոնաւոր կամ արտակարգ) : Առ նուազն 15 օր առաջ՝ պարտի օրկանին մէջ հրաժարակել իր տեղեկագիրը :

Յօդ. 32. — Եթէ որ եւ է պատճառաւ Գործ . Մարմնոյ անդամներէն մէկը հրաժարի, նոր անդամը կ'ընտրուի Ուսուցչ . Մարմիններու հաւ անութեամբ :

Յօդ. 33. — Գործ . Մարմինը կամ անոր անդամներէն մէկը եթէ հրաժարականը տայ, պարտաւոր է վարել գործերը մինչեւ որ նորերը ընտրուին :

Յօդ. 34. — Եթէ Գործ . Մարմինը իր ամբողջութեամբ հրաժարի կամ իր անդամներուն մեծամասնութիւնը տայ իր հրաժարականը, այն ատեն գործը կը յանձնուի թուով աւելի շատ եղող Ուսուցչ . Մարմնոյ մը :

Յօդ. 35. — Գործադիր Մարմնոյ անդամները պարտական են ներկայ գտնուիլ Պատգմ . Ժողովին խորհրդատու ձայնով լոկ համարատուութեան ժամանակ :

Յօդ. 36. — Գործ . Մարմնոյ տեղը կ'որոշէ Պատգմ . Ժողովը :

Ը

ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՆՉՐ

Յօդ. 37. — Միութեան գանձին հասոյթներն են . Ա.) Սնդամալճարներ, (Յօդ. 20 եւ Ծահօթ.) , Բ.) Հրաժարակութիւններէ գոյացած գումար, Գ.) Ներկայացումներէ, Երեկոյթներէ եւ այլն գոյացած գրամներ, Դ.) Սնդամներէ եւ զանազան անհատներէ նուէրներ :

Յօդ. 38. — Միութեան գանձը կը ծախոէ . Ա.) Հրաժարակութիւններու համար, Բ.) Սնդամներու օգնութեան համար (Յօդ 17), Գ.) Ներկայացումներէ, Երեկոյթներէ եւ այլն գոյացած գրամներ, Դ.) Պատգամաւորներու համար ճանապարհածախոէ զատ օրական ($1\frac{1}{2}$) մէկ ու կէս ֆր. : Եռինպէս Գործ . Մարմնոյ անդամներուն եւ խորհրդատու երկու ան-

դամներուն համար, որոնք տարբեր ամպեր կը գտնուին : Ե) Պատահական ծախութերու համար :

Յօդ. 39. — Միութեան դրամները կը մնան Գանձապետին քով :

Յօդ. 40. — Գանձապետին քով կը մնայ միայն (200) երկու հարիւր ֆր., Մնացած դրամները կը յանձնուին ո եւ է քրէտիթ հաստատութեան մը իր անունով :

Յօդ. 41. — Ընդհանուր ժողովը կ'որոշէ Գանձապետին տալիք զրամական երաշխաւորութիւնը :

Յօդ. 42. Պահեստի զրամէն պէտք եղած ատեն կ'առնուի Գործ . Մարմնոյն որոշմամբ :

Փ

ՊԱՏԳԱՄՍԱԽՈՐԱԿԱՆ ՃՈՂՈՎ

Յօդ. 43. — Պատգմ . Ժողովը Միութեան ամենաբարձր մարմինն է :

Յօդ. 44. — Պատգմ . Ժողովը կ'ըլլան կանոնաւոր եւ արտակարգ :

Յօդ. 45. Պատգմ . Ժողովը կը գումարուի տարին անգամ մը : Գումարման թուականը եւ օրը կ'որոշուին Ուսուցչ . Մարմիններին Գործ . Մարմնոյն առաջարկութեամբ :

Յանք. — Արտակարգ Պատգմ . Ժողովը կը գումարուի ստիպողական պէտքի առջեւ :

Յօդ. 46. — Ամէն մէկ Ուսուցչ . Մարմին կը դրկէ մէկ պատգամաւոր : Ռումանական վանա, Ֆիլիպէ կը դրկեն երկուքական պատգամաւոր, իսկ մասնաւոր վարժարամներու ուսուցչական մարմինները 1-5 մէկ պատգամաւոր, հինգէն վեր երկու պատգամաւոր կը դրկեն :

Յօդ. 47. Պատգ . Ժողովը կը բնակ Գործ . Մարմնոյն հաշիւները, ապագայ գործունէութեան համար որոշումներ կու տայ, կ'ընտրէ Գործ . Մարմինը եւ կը խորհրդակցի ներկայացուած հարցերու վրա :

Յօդ. 48. Պատգ . Ժողովին մէջ ծեծուելիք խնդիրները կը հրաժարակուին օրկանին մէջ չորս ($\frac{1}{4}$) ամիս առաջ :

Յօդ. 49. — Պատգ . Ժողովներու որոշումները պարտաւոր են ընդունիլ Ուսուցչ . Մարմինները :

Φ

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 50. — Միութիւնը՝ իր հրատաւակին հասնելու համար՝ կը հրատարակէ օրկան մը, զիրքեր եւ այլն :

Յօդ. 51. — Միութեան հրատարակութիւնները ի լոյս կ'ընծայուին նմբագրական Մարմնոյ եւ Գործ. Մարմնոյն ղեկավարութեամբ :

Ծանօթ. — Օրկանին եւ հրատարակութեանց գիները կ'որոշուին Գործ. Մարմնոյն կողմէն՝ Ուսուցչ. Մարմններու հաւանութեամբ :

Յօդ. 52. — Խերժը պիտի զրադի գլխաւորաբար մանակավաճական հարցերով (ընկերական եւ զիրական) եւ Միութեան ընթացիկ գործերով :

ՓԱ

ՅԱԽԵՂԱՄԾ ՄԱՍ

Յօդ. 53. — Միութիւնը ունի իր կնիքը՝ որուն վրայ զըրռուած է „Պաւարէնց Հայ Ուսուցչ. Միութեան, 22 Յուլիս 1906“ (Պուլկարէնց եւ Հայերէն լեզուով) :

Յօդ. 54. — Կնիքը կը պահուի Գործ. Մարմնոյն Ատենապետին քոլ:

Ծանօթ. — Պաշտօնական գրութիւնները զիւանին ստորագրութիւնը եւ կնիքը պէտք է կրնի :

Յօդ. 55. — Միութիւնը ունի իր տօնը, Ս. Սահակ Մելքոնի օրը :

Յօդ. 56. Ներկայ կանոնագիրը կրնայ փոփոխութեան ենթարկուիլ յասաջիկայ Պատգ. Ժողովին ձայներու մեծամասնութեամբ :

Յօդ. 57. — Պուլկարահայ Ուսուցչ. Մարմններէն աշնոնք՝ որոնք կ'ընդունին Միութեան կազմական կանոնագիրը, զպրոցական ներքին կանոնագրութիւնը, եւ կ'ունենան Ա. Համագումարին մէջ մշտկուած ծրագրի ոգւոյն եւ ուղղութեան համապատասխան ծրագիր, կ'ընդունուին Միութեան մէջ :



